

## Գ Ա Մ Է Շ Բ

---

Անսանտապահութեան մէջ դոմիշը Կովկասում բաւական կարեւոր տեղ է գրաւում շատ տեղեր, զիւղական հասարակութեան մեծագոյն մասը իւր տան ապրուստը նրանով է ճարում. նոյնպէս մ.ծ կալուածքներում, ուր դեռ ձիերի գործածութիւնը հողագործութեան մէջ մասն չէ՝ դոմիշը ծառայում է իրրե կենդանի մեքենայ. նա կարեղ է երկրագործութեան մէջ աւելի օղտակար լինել, եթի հոգ տարուի նորա տեսակը աղնուացնելու:

Ինչպէս ամէն բոյս նոյնպէս էլ ամէն կենդանի չի կարող ապրել ամէն երկրում՝ և ամէն կիմայի առկ այդ պատճառու մի բոյսի կամ կենդանու աեսակը աղնուացնելու համար, պէտք է ի նկատի ունենալ այդ բոյսի կամ կենդանու հայրենիքը՝ թէ նրանք ինչպիսի պայմանների առկ են ծլել ու ծնել և ինչպիսի պայմանների առկ են ապրում:

Դոմիշը տոք և ճախճախուած երկրների բնիկ կենդանին է, ապրում է վայրենի դրութեան մէջ Հնդկաստանում և Սէյլսն կղզում; իսկ ընտանի է ամբողջ արևմտեան Ասիայում տարածուել է Հայաստան, Յունաստան, Բուլկարիա, Բուլғարիա, Հունգարիա, Եգիպտոս և Խաղիա:

Դոմիշը իրրե արագ ներկայացնում է հետեւեալ յատկութիւնները. երկայն և խոշոր մարմին, ունեավեր, վիզը կարծ ու հաստ, զլուխը լայն և կարճ, ճակատը գողաճե դուրս ցցուած, որի վերայ հաստատուած են սե ու տափակ կոտոշները, ծռուած դէպի դուրս և ետե, աչքերը փոքր, ականջները երկայն, ոռւնդները և շրթունքները հաստ կաշին երբեմն սեագոյն, երբեմն մոխրագոյն և տեղ տեղ թրիայած, մաղերը մինչև չորս տարեկան հաստկում խիս են, իսկ չորսից սկսեալ աւելի ցանցառ, սե, մոխրագոյն և շաղանակագոյն են լինում, սպիտակ գոյնով մաղեր դրեթէ չեն լինում: Միջին հաշւով 2 արշին բարձրութիւն ունեցող մի գոմիշ կշռում է մօտաւորապէս 40 փութ:

Չնայած դոմեշի յաղթանդամ կազմուածքին՝ նա շատ փափուկ մի կենդանի է, ձմեռը առնուազն շարաթը մի անգամ հարկաւոր է լողացնել իսկ ամսուը եթե կարելի լինի ամեն օր, 15 օրը կամ ամիսը մի անգամ անհրաժեշտ է կուռաստի ձեթով կամ սե նաւթով մարմինը օծել՝ ոչընչացնելու համար բոլոր այն միջամաները՝ որ սասարկ եռ ևն առջիս մարմնոյն: Գոմեշը ցուրտի չի կարող պիմանալ, նա յած տեղույն օգերեւութարանական հանգամանքներին՝ հոկտեմբերի կամ նոյեմբերի վերջերը, երբ արգեն ձմեռնային ցուրտերը սկսում են, պէտք է գոմերի մէջ կոսպել մինչեւ գարնան գեղեցիկ օգերի բացռւիլը:

Գոմեշը ամսու ժամանակ սնունդից աւելի առատ ջրի կարիք է զգումն սիրում է թաւալիլ տիզմերի, ձաշիճների մէջ, և ժամերով նստել գետերի, աւաղանների մէջ, ուրեմն չոր ու ցամաք տեղերում անյարմար է գոմեշ պահելը և չի կարող արգիւնաւոր լինել. օրինակի համար Վաղարշապատում գոմեշից սուացուած արդիւնքը անհամեստ աւելի քիչ է՝ քան թէ մէկ երկու ժամ հեռուն գանւող Սև-Ջրի մօտ ապրող գոմեշից սուացուած արդիւնքը. դորա պատճառը զիսաւորապէս ջուրն է. այն ինչ Վաղարշապատում ամրան ամիսները Ջրի պակասութեան պատճառաւ բուսականութիւնը չորանում ոչնչանում է, չկան ստուար ծառաստաններ, անձրև գրեթէ չի գալիս, խեղճ անառունները զաշտ գնալիս ոչ միայն լողանալու ջուր չեն գտնում, այլ նաև շատ ժամանակ խմելու ել ջուր չդանելով ստիպուած են լինում մինչեւ երեկոյ ծարաւ անցկացնել. այդպիսի տիսուր պայմաններում բնականաբար գոմեշը չի կարող պէտք եղած օգուտը տալ:

Գոմեշը իրեւ սնունդ սպասում է իսու և դարման, ձաշիճներում և բնական մարդագետիններում առանց գիւղատնտեսական որեւէ խնամքի աջող ամենասանպէտք բոյսերն իսկ նա չի մերժում. բաւական է որ իւր տրամադրութեան տակ լինի առատ ջուր, կարտաղը, հարկ եղած աշխատութիւնը, կաթը, միսը, կաշին, աղը:

Գոմեշը լծուում է չորս տարեկան հասակումն որի

արժեքը, իրրեւ լծկան բարձրանում է մինչեւ տասը տարեկան հասակը. սրանից յետոյ հետզետե կորցնելով իւր արժեքը գիւղական աղքատ ժողովրդի համար դառնում է մսացուշ նրբեւ աշխատաղ կենդանի գոմեշը յայտնի է իւր ուժեղութեամբ. երկու անդամ աւելի ուժեղ է քան թէ եղը բացի դրանից գոմեշը միակ կենդանին է որ կարողանում է գիւմանալ ճահիճներից յառաջացած ամենավտանգաւոր հիւանդութեանց: Աերջապէս բրինձի մշակութիւն եղած տեղերում գոմեշը անհրաժեշտ է վարելու համար տղմուտ և ամենաուժեղ հողերն:

Գիւղատնտեսութիւնը չզարդացած աեղերում մատակ գոմեշը իրրեւ կաթնատու գիւղական ժողովրդի համար ամենաօգտակարն է: Զմեռ ժամանակ գիւղերում հաղիւ կարելի է կոփի կաթ ճարել, բայց մատակի կաթը և մածունը անսպակաս են: Թէպէտե գիւղացին կաթնատուն պահում է ոչ թէ փող շահելու համար, այլ իւր տան տնտեսութեան մի մասը լրացնելու, սակայն երբ մի օր գիւղացուն տրուին այն միջոցները, որով նա կարողանայ հեշտութեամբ կաթը փոխադրել քաղաքներ՝ վաճառելու և փողի վերածելու, այդ դէպքում, ամէն գիւղացի փոխանակ մէկի՝ պիտիցանկանայ իւր տանը երկու երեք կաթնատու ունենալ:

Մատակը երեք տարեկան հասակում քաղ է ուտում և քաղ ուտելուց 10 ամիս յետոյ ծնում է. շատ քիչ է պատահում որ 2 տարեկան հասակում քաղ ուտէ. այդպիսիները բացառութիւն են կազմում, և լաւ տեսակի մատակ չեն կարող լինել:

Նայած մատակի տեսակին, կան այնպիսիները, որ ամէն տարի ծնելով 6—8 ամիս անընդհատ կթուում են. կան այնպիսի տեսակներ էլ որ 2 տարին մի անդամ են ծնում կթուելով 14—16 ամիս. առաջին տեսակի մատակը աւելի օգտակար է, որովհետեւ տալիս է ամէն տարի մի ձագ և իւր արտադրած կաթի քանակութիւնը կարծ ժամանակամիջոցում աւելի շատ է քան թէ երկրորդ տեսակի արտադրած կաթի քանակութիւնը:

Միջին հաշվով մատակը տալիս է տարեկան 1000—1200 լիդր կաթ:

Մատակի կաթը սպիտակ և աւելի թանձր է լինում քան թէ կովի կաթը՝ սպանրային նիւթերը շատ են, նոյնպէս և իւղային նիւթերով աւելի հարուստ է քան թէ կովինը. միջին հաշվով ձմեռ ժամանակ  $8-10^0$  և ամառ  $7^0$  իւղ է սպարունակում: 12—15 լիդր կաթից կարելի է պատրաստել  $2\frac{1}{2}$  ֆունդ կարագ, մինչդեռ կովի կաթից այդքան կարագ պատրաստելու համար պէտք պիտի լինէր 25—30 լիդր. ուրեմն մատակը իրրե կաթնատու որոշ պայմանների մէջ աւելի ձեռնտու է քան թէ կովը: Մատակը մինչև ութ տարի աւելացնում է կաթը. ութ տարուց յետոյ կաթը հետզհետէ պակասեցնում է մինչև 12 տարեկան՝ որից յետոյ իրրե կաթնատու արժէքը չունի:

Պառաւած գոմէշի միսը յատկութեան աեսակէտից շատ վատ է, բայց 6—7 տարեկան գոմէշի միսը աւելի լաւ է քան թէ պառաւած եղան միսը: Գոմէշը պարարաանալու շատ ընդունակ է. կարելի է գիւղական աղքատ հասարակութեան համար լաւ և աժան գնով մասցու պատրաստել:

Գոմէշը տալիս է նաև լաւ կաշի՝ որի փութը արժէ 4—6 ըուրլի. բայցի դրանից արտադրում է աղը մեծ քանակութեամբ. շատ տեղ գործ են ածում իրրե վառելանիւթ, բայց իրրե պարարտացուցիչ նիւթ, Կովկասում դեռ աղը արժէքը դնահատուած չէ:

### Մելքոն Պազարասեանց

